ԵՐԵԽԻ ՆՄԱՆ

Երեխի նման մըտա ես աշխարհ,
Անվերջ միամիտ, անխելք անձնըվեր.
Սըրտումըս ինչ կար, ձեռքիս ինչ որ կար՝
Բաժնեցի մարդկանց՝ [անսեր, անտարբեր]։

Երեխի նման խաբեցին ինձ շատ,
Երազուն ու խենթ երեխի նման.
Ծաղրեցին երազ, [և՛ սեր], և՛ հավատ,
Խընդացին վըրես իմ դեմ հանդիման։

Երեխի նման վարվեցին ինձ հետ,
Մի խորթ ու օտար երեխի նման.
Ամեն հաճույքիս նայեցին միշտ խեթ,
Վըրդովմունք տըվին ամեն մի վայրկյան։

Երեխի նման տանջեցին ինձ բիրտ
Ընկեր, մերձավոր, և եղբայր, և կին.
Ես էլ հուսահատ, զըզված խորասիրտ
Երեխի նման թողի ամենքին...

Եվ ահա էսպես՝ հոգնած ու վշտոտ,
Դադարգուն եղա, ամենքից փախա.
Ամենքից փախած գալիս եմ ձեզ մոտ –
Եվ դուք էլ, [ավա՜ղ], ինձ պես երեխա։